

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

أزتاك حرة يومية سياسية وأدبية - النيرة المسؤولة، إيتادرويشيان

1500 Լ.Ո. 769Գ ՏԱՐԻ, ԹԻԻ 211 (21553) ՇԱՐԱԹ, 15 ՆՈՅՏԵՐԵՐ 2003 10 ԷՉ

ՍՈՒՐԻԱ Կ'ԱՐԳԻԼԷ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԿԻՉԱՅԻ ՍԱՀՄԱՆԸ ԱՆՏՆԻԼ

Սուրիա այս տարի արգիլած է թուրքերուն՝ ֆիթի տունին առիթով Սուրիոյ մէջ իրենց ազգականներուն այցելել, յայտնեց թուրք պաշտօնատար մը, Ուրբաթ օր:

Թրքական աղբիւրը ակնցոյց, որ Սուրիա բացատրութիւն չտուաւ, թէ ինչո՞ւ կը խախտէ 1999ին ստորագրուած համաձայնագիրը, որ կ'արտօսէ սահմանա-մերձ շրջաններու բնակիչներու՝ անցնելու միւս կողմը՝ ազգականներու այցելութեան համար: Համաձայնագիրը կ'արտօսէ, որ մարդիկ առաջ մուտքի արտօնագիրի սահմանը անցնելու 48 ժամուան կէցութեան համար:

Սուրիա մեկնաբանութիւն չկատարեց այցելութիւնները արգիլած ըլլալու լուրին մասին:

(ԱՅՓ)

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐԸ ԻՐԱՔ ԵՒ ԱՅՂԱՆԻՍԱՆ ՊԻՏԻ ՄՆԱՆ ՄԻՆՉԵՒ ՈՐ ՍԱՏՏԱՄ ՀԻՒՍԷՅՆ ԵՒ ՊԸՆ ԼԱՍԷՆ ԳՏՆՈՒԻՆ...

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԸ ՊՈՒՇ

ԼՈՆՏՈՆ, 14 (ԱՅՓ).— Միացեալ Նահանգներ իրաքի եւ Աֆղանիստանի մէջ պիտի մնան մինչեւ որ նախկին ղեկավար Սատտամ Հիւսէյն եւ «Քալիտա» ղեկավար Ուսամա Պըն Լատէն գտնուին եւ ամերիկեան ուժերուն առաքելութիւնը աւարտի այդ երկիրներուն մէջ, յայտարարեց Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ:

Բրիտանական «Յայնէնչըլ Թայմզ»-ի հետ հարցազրույցի մը ընթացքին Պուշ ըսաւ, որ գործը աւարտելէ առաջ, պիտի չհեռանանք հոնկէ: Ան շեշտեց, որ ամերիկեան հիմնական առաքելութիւնն է ձեռքաւարել Սատտամն ու Պըն Լատէնը:

ՄՈՖԱԶ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ ԼԻՐԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ

Հարաւային Լիբանանի մէջ, սահմանագիծին վրայ, երէկ տեղի ունեցան իւրայիշեան ուժերուն կողմէ զինուորական պատրաստութիւններ: Իսրայէլեան զինուորական բարձրաստիճան պաշտօնատարներ յայտնեցին, որ իսրայէլ նպատակադրած է թախտամներ ստեղծել, սակայն նախազգուշութիւններու կը դիմէ, որպէսզի որեւէ ատեն կարենայ Հրգպալլայի կողմէ հաւանական որեւէ յարձակումի դիմադրել:

Վերոնշեալ աղբիւրները աւելցուցին նաեւ, որ Հրգպալլա, որ «հասցեկէտութեան գազաթնակէտը նուաճած է», կը վայելէ Սուրիոյ եւ Իրանի գորակցութիւնն ու հովանաւորութիւնը:

Անոնք հաւաստեցին, որ Հրգպալլայի կողմէ նախա-յարձակ ըլլալու որեւէ քայլ Սուրիոյ պատասխանատուութիւնն է եւ լիբանանցիները զգուշացուցին Հրգպալլայի պատճառով իրենց հասնելիք վնասներէն:

Միւս կողմէ, Իսրայէլի պաշտպանութեան նախարար Շատուու Մոֆազ երէկ սպառնաց Լիբանանի եւ Սուրիոյ՝ դիտել տալով, որ գոյութիւն ունին հաւրեւելիական ոտտաններ, ուր կը մարզուին հաւրեւելիներ սուրիական թէ լիբանանեան մարզումի գաղտնի կեդրոններու մէջ:

Շար.՝ էջ 2

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՊԸՐՐԻԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ Այնէլ-Թինէի մէջ ընդունեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանը, որուն հետ քննարկեց երկրին վերջին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութիւնը յուզող հարցեր:

Հ. Յ. Գ. ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ «ԹԱՏԱՄՈՆ»Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ

«Թատամոն» կուսակցութեան հրաւերով, երէկ առաւօտեան ժամը 10:30ին Հ. Յ. Գ. Կեդրոնական Կոմիտէի մէկ պատուիրակութիւնը այցելեց կուսակցութեան կեդրոնատեղի, Էշրեֆիէ, ուր հանդիպում մը ունեցաւ տարբեր կուսակցութիւններու ղեկավարներուն հետ: Քննարկումի առարկայ դարձաւ պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագիրին թղթածրարը, շեշտելով պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքը:

ԿՐԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՇԵՏՉԵՏԷ ԿԸ ԿԱՐԾՐԱՑՆԵ ԻՐ ԿԵՑՈՒԱԾԸ



Վրաստանի ընդդիմադիր ճակատի գլխաւոր ղեկավարներէն՝ Միխայիլ Սահակաշվիլի երէկ կոչ ուղղեց վրացիներուն՝ պոչքոթի դիմելու եւ դադարեցնելու բոլոր աշխատանքները, ինչպէս նաեւ տուրք չվճարելու պետութեան, մինչեւ որ նախագահ Էտուարտ Շեւարտնաձէ չհեռանայ իշխանութենէն: Այլ խօսքով, ընդդիմութիւնը կ'որդեգրէ քաղաքացիական անհաւաստութեան տարբերակը:

Երէկ, շուրջ 10 հազար վրացիներ (ըստ ընդդիմադիրներուն՝ 20 հազար) հաւաքուեցան Շեւարտնաձէի Թիֆլիսի գրասենեակին մօտ եւ պահանջեցին անոր անմիջական հրաժարակարգ: Ոստիկանական ուժերուն կողքին նաեւ բանակային ջոկատներ տարածուեցան մայրաքաղաքի տարբեր շրջաններու մէջ:

75ամեայ Շեւարտնաձէի դէմ բողոքի այլքը ծաւալած է երկու շաբաթ է ի վեր, որովհետեւ ըստ ընդդիմադիրներուն՝ խորհրդարանական ընտրութիւններուն անոր կողմնակիցները կատարած են կոպիտ խախտումներ եւ կեղծած են քուէարկութեան արդիւնքները, որոնք տակաւին չեն յայտարարուած: Շեւարտնաձէ կ'ամբաստանուի նաեւ երկրին տնտեսական եւ ընկերային անփառնակ կացութեան իբրեւ պատասխանատուն:

Միւս կողմէ, երէկ Շեւարտնաձէ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ: Վրացի ղեկավարը Փութինի պարզած է երկրին վերջին իրադարձութիւնները:

Հ. Յ. Գ. Ի ՀԻՄՆԱԳԻՐ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ՝ ՄԻՄՈՆ ԶԱԻԱՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 90ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութեան մէջ իր իւրայատուկ տեղն ու արժէքը գրաւած, ճշմարտութիւնը իր պաշտամունքի առարկան դարձուցած ու ազգի սիրով սոգորուած «Դաշնակցութեան մարմնակրթութեան կենտրոն»-ի հանգիստացող Սիմոն Զաւարեանի մահուան 90ամեակը արժանատրապէս ոգեկոչուեցաւ երէկ, Ուրբաթ, 14 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8:00ին. «Յակոբ Տէր Մելքոնեան» հանգիստարանի մէջ:

Հ.Յ.Գ. Զաւարեան Ուսանողական Միութեան կազմակերպութեամբ կայացած այս ձեռնարկին ներկայ էին Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան, Հայ Կաթողիկէ համայն-

քի ներկայացուցիչ Անտոն վրդ. Շատարեան, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիւեան, պատկան մարմնակրթութեան ներկայացուցիչներ եւ մեծ թիով երիտասարդներ:

ԶՈՄԻ անուանով ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Յովսէփ Տէր Գեղորգեան եւ ըսաւ, թէ Սիմոն Զաւարեանի մահով հայ ժողովուրդը կորսել է իր ժողովուրդը կորսելուց հաւատքի, խղճի եւ նուիրումի անկրկնելի տիպար մը, որ ամբողջ կեանք մը նուիրեց իր հայրենիքին: Ան հաստատեց, թէ հակառակ իր մահուան, ան

մնաց ազգային ուրոյն արժէք մը, որ ծառայեց իր ազգին եւ պայքարեցաւ ժխտական երեւոյթներու դէմ: Անդրադառնալով ներկայի իրավիճակին, Յ. Տէր Գեղորգեան նշեց, թէ այսօր ամենուրեք արժէքներն ու սկզբունքները խախտած են, չպահանջները փոխուած, սակայն ՉՈՄը պարտք կը զգայ հաւատարիմ մնալու Զաւարեանի գաղափարներուն ու սկզբունքներուն եւ ամբողջ ուժով գործել ի խնդիր անոնց գործադրութեան: Ան շեշտեց, որ ՉՈՄը կը հաւատայ, թէ այդ սկզբունքայինութեան մէջ կը կայանայ Հայ Դատի յաղթական երթի գրաւակները:

Բացման խօսքէն ետք ցուցադրուեցաւ Հ. Յ. Գաշնակցութեան հիմնադիրներէն Սիմոն Զաւարեանի նուիրական աշխատանքին, անձնամուտը որ ծ ո ո ն է ո թ է ա ն , սկզբունքներուն եւ գաղափարներուն հաւատարիմ հայրու դաշնակցականի կեանքի գանգամ հանգրուանները եւ անոր մահը ներկայացնող տեսանկյունը:

Այս խմբերգով հանդէս եկան Հ. Յ. Գ. Զաւարեան Պատանեկան Միութենէն խումբ մը պատանիներ, դաշնակի ըն-

Շար.՝ էջ 3

ՄՈՍԿՈՎԱՅԻ ՄԵՋ ԻՎԱՆՈՎԻ ՀԵՏ ՀԱՆԳԻՊՈՒՄԻՆ ԱՒԱՐՏԻՆ

ՕՍԿԱՆԵԱՆ ԿԸ ՉԵՐՔԷ, ԹԵՒ ՎՐԱՍՏԱՆ ԴԱՅՄԱՍՏԱՆԷՆ ԶՈՐՔ ԽՆԴՐԱԾ Է

Երէկ Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարներ՝ Վարդան Օսկանեանի եւ Իկոր Իվանովի հանդիպումը: Ռուս պաշտօնատարը դրական գնահատելով Ռուսիոյ եւ Հայաստանի համագործակցութիւնը նշեց, թէ երկու երկիրներուն նախագահները մշտական կապի մէջ են: Ան ընդգծեց միջազգային բեմին վրայ Մոսկուայի եւ Երեւանի գործակցութեան «արդիւնաւէտ բնոյթը»:

Իր կարգին, նախարար Օսկանեան յայտնեց. «Մեր հանդիպումներն ու շփումները յատկապէս անհրաժեշտ են շրջանի եւ աշխարհի այսօրուան բարդ իրավիճակին մէջ»:

Նախարար Օսկանեան այս առիթով հերքեց Վրաստանի իշխանութիւններուն կողմէ Հայաստանէն զօրք խնդրելու մասին լուրերը:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՇԱՅՈՒՆԻ ՀԵՏ

Նախարար Վարդան Օսկանեան երէկ տեսակցեցաւ նաեւ Ռուսիոյ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Վլատիմիր Ռուչայլոյի հետ: Վրաստանի յետընտրական իրավիճակի քննարկումներէն ներս նախարար Օսկանեան նշած է. «Մեզի համար կարեւոր է Ռուսիոյ կարծիքը եւ գնահատականը Թիֆլիսի մէջ տեղեւորած իրավիճակին, ինչպէս նաեւ դէպքերու հետագայ զարգացման առնչութեամբ»:

Ռուչայլոյ իր կարգին լուսարձակի տակ առած է հայեւորուս յարաբերութիւններու զարգացման արագ թափը եւ նշած է. «Շրջանային անվտանգութեան, ռազմավարական կայունութեան, առեւտրատնտեսական համագործակցութեան ընթացքի հարցերու մէջ մենք կը խօսուիք նոյն լեզուով»:

«ՀՈԿՏԵՄԲԵՐ 27»Ի ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ «ԱԻԱՐՏԵՑԱԻ»

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքներու առաջին ատենի դատարանը աւարտեց «Հոկտեմբեր 27»ի դատավարութիւնը: Դատարար Սամուէլ Ուլունեան յայտարարելով դատավարութեան աւարտը՝ մեկնեցաւ խորհրդակցական սենեակ՝ դատավիճակը կայացնելու:

Երէկուան նիստին ընթացքին դատարանը վերջին խօսքի իրաւունք տուաւ ամբաստանեալ Նայիրի Յունանեանին: Այս վերջինը, հակառակ անոր որ խոստացած էր երկու ժամուան ընթացքին արտասանել իր խօսքը, անընդհատ շեղումներ կատարեց՝ վերլուծումներ ընելով դատարանութեան գծով, ինչ որ դատարար Ուլունեանը մղեց ընդհատելու ամբաստանեալին խօսքը:

Նշենք, որ 1999 Հոկտեմբեր 27ի ոճիւրդի կոհ գացած էին վարչապետ Վաչագան Սարգսեան, Ազգային Ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեան, Ազգային Ժողովի փոխ նախագահներ Եւրի Բախշեան եւ Ռուբէն Միրոյեան, պատգամաւորներ Հենրիկ Արախամեան, Միքայէլ Քոթանեան, Արմենակ Արմենակեան եւ նախարար Լէոնարտ Պետրոսեան:

Դատավարութիւնը սկսած էր 2001 Փետրուար 15ին եւ ցարդ կայացած է 297 նիստ: Յարուցած քրէական գործին կ'առնչուին 91 տուժողներ, 8 իրաւայաջորդներ, 123 վկաներ:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ԿԱՂԸ ԿԸ ՄԵԿՆԻ ՌՈՒՄԱՆԻԱ

Ռումանիոյ նախագահ Իոն Իլիէսքույի հրաւերով Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան պաշտօնական եռօրեայ այցելութեամբ մը վաղը կը մեկնի Ռումանիա: Անոր գլխաւորած պատուիրակութեան մաս կը կազմեն Հայաստանի արտաքին գործոց, փոխադրամիջոցներու եւ հաղորդակցութեան նախարարները, Ազգային Ժողովի անդամներ եւ այլ պաշտօնատարներ: Նախագահ Քոչարեան հանդիպումներ պիտի ունենայ Ռումանիոյ նախագահին, վարչապետին, խորհրդարանի նախագահին հետ: Ընդհանրապէս երկու երկիրներու համագործակցութեան հեռանկարներուն առնչուող բանակցութիւններուն իբրեւ արդիւնք պիտի ստորագրուին համաձայնագիրներ:

Հ. Յ. Գ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հ. Յ. Գ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ

Խորհրդարանի նախկին նախագահ՝ Երեսփոխան ԸԻԿՍԷՅՆ ԸԻԿՍԷՅՆԻ ԿԵՆ

ՆԻՍՔ ԹԱՅԵՖԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 19 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Յակոբ Տէր Մելքոնեան սրահին մէջ:

Շար.՝ էջ 3

Գրական Էջ

ԱՄԲՈՂԱԿԱՆ ԱԼԻՇԱՆ



«Չգուշտրեանք կոխեցէք Մխիթարեան Հայրերուն նուիրական կողմն, չէր ամէն մէկ քայլը կրնայ հանձնարք մը պահուին հանդիպելու...»

ԳՆՆԻԷՆ ՎԱՐՈՒԺԱՆ

Յապաղած, բայց ոչ ուշացած, «Համագգա- յին»-ի լիբանանեան ընտանիքն ու Մխիթարեան հայրերը երկրորդ անգամ կը գնեն մահուան 125ամեակը բազմավաստակ հայուն՝ Հայր Ան- տոնի Ալիշանի, որ շուրջ երկու դար առաջ, 1820-ին, Քերտվեթ անունով իր աչքերը լոյսից բացուեցին Բիւրսեայի քաղաքում...

Հայաշխարհէն հարիւրաւոր միլիոններ հեռու, առանց Հայաստանը տեսած ըլլալու, Պոլսէն օտար կղզի հասած այն տեսլապաշտ նուիրեալը եղաւ նաեւ, որ իր արտակարգ աշխատասիրու- քեամբ, ամբողջական նուիրումով եւ մշտաբո- ռօք ապրումներով կեանք մը ամբողջ Հայաս- տան երազեց, ապրեցաւ Հայաստանի եւ հայ մշակոյթի անսպառ լոյսերով, գեղեցկութիւններով ու խորհրդաւորներով եւ իր սրտին քաղցր- հունց բաբախումներով ոգեշնչեց, աւելի ճիշդ հայաշնչեց իրեալայաջորդ սերունդները իրբեւ- ուսուցիչ ու մտաւորակ, բանաստեղծ ու հոգեւորական:

Պահ մը լայն բացք ձեռն հայու ներքին աչքը հայ մտաւորականի եւ գրագետի այս բացառիկ տիպարին վրայ, հովին յանձնեցէք իր գրաբա- րախառն լեզուին ծանրաշուք բանաստեղծը, ժամանակի հետ դատարանին փոխանցեցէք իր նուագներուն անցելաշուշ հիւսուածքը եւ յայնժամ պիտի հաստատք անվարան, որ իր վա- րակիչ շունչով, ապրումին ձոյլ իրաւութեամբ, լեզուին բափնցեցիկ գրաւութեամբ, երեւակա- յութեան անհակադէմքի թափով, բնութիւնն ու տիեզերքը մարդկայնացուցած պատկերամտա- ծողութեան ինքնադրոշմ փայտակալումներով, բայց մտնաւան իր գիրին տարօրէն հայատը- րոքի կրակով ու բեյադրականութեամբ Ալիշանն ոչ թէ իր ժամանակին հետ մար մտած անմատ- չելի, հնամենի կամ ժամանակավրէպ բանաս- տեղծ մըն եւ այսօր, այլ, ընդհակառակն, մերօր- եայ ներկայութիւն մը, որուն հաստեղծն ու ապ- րումին կշռոյթներով բեւառորուած երգերը կը շարունակեն հնչել վերանորոգ ուժգնութեամբ ու հմայքով՝ իրբեւ ոգեւայց բանաստեղծի մը վաւերակն պտորկումներ:

Վասնզի՜ հակառակ ժամանակի անգուր դա- տումին, ազգային, հայրենասիրական ու կրօնա- կան մայր տարրերով բնորոշուող Ալիշանի գրա- կան վաստակը կու գայ հաստատելու բիրտորոգ անգամ, որ եականը ոգին է, այն սրբագան կրա- կը, որուն ամենագոր փոթորկումներով գրակա- նութիւնը կը դառնայ «արեւան երեւոյթ», Մեծն Օշականի նշխարաւոր բնորոշումով: Անժամ- մանցելի արժանիք մը, որուն շնորհիւ հասկնա- լի կը դառնայ, որ գտարին նուիրուածութիւնը նաեւ յատկանիշ է, վեհանմունքներն ու առաքի- նութիւնը՝ նոյնպէս, ազնուութիւնն ու հոգեկան մարտնչութիւնն ալ՝ իրենց կարգին, որոնց ամբող- ջական հմայքով ու խորհրդաւորներով հարստա- ցած՝ Ալիշանը կը շարունակէ հայ սերունդները վարակել գաղափարապաշտ եւ յանձնառու հայ գրագետի իր հայտարար հրաւերներով ու պատ- գամներով՝ իրբեւ հայ դարաւ որ ոգիի ազնուա- ձայն պատարագ եւ պատարագիչ, ու խոսելու ար- տապան:

Ս. ԿԵՐԱԿՈՍԵԱՆ

ԽՈՐՏՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԸՆԴ ԵՂԵԻՆԵԱՄ

Որքան թեթեւ է, ո՛հ, շունչը այստեղ, այս ամառային մէջ, որքան ազատ ու անուշ է օդը, որքան ազնուական եւ հշտակոխ են այս վայրերը: Ի՛նչպէս ես ինքնին յանկարծ այսպէս թեթեւացած՝ կը կարծեմ թեւաւոր- ւած վագել, քան թէ քաղցի ոտքով, հեռու հետքերէն դաստակերտներու, եւ մօտ աստ- ւածաստեղծ արարածներուն: Հոփտներ հո- վիտներու կը յաղորդեն, եւ բուրներ բլուր- ներու. տեսարան մը ուրիշ տեսարան կը ծած- կէ, եւ հորիզոններ ուրիշ հորիզոններ կը բա- նան: Ո՛չ թէ յոգնութիւն կամ վաստակ, այլ հանոյք եւ երջանկութիւն կը զգամ հոս կանգ առնելով արշաւող կեանքին ընթացքին: Ու դաշտադաւառին այս բարձրագոյն կէտին վրայ կանգուն, այս բարձրագոյն բլրան կա- տարին, - որ ինչպէս մեծակառոյց գահաւո- րակ մը հանգչած է բազմաթիւ բլուրներու վրայ, հայեացքն ուղղած մինչեւ սքանչելի անհունութիւնը ովկէանին, - կը նշմարեմ ահա գրեթէ հոսկէ յաւիտենական պատկերը համասփիւռ անդունդներու, որպէս մեծ աղամանդ մը արեւուն տակ շողողուն: Եւ ինչպէս գեղեցիկ հովոց մը այս գահաւորա- կին, բլրան կատարին, իր նմաններէն եւ բո- յոր ձեռներէն հեռու, բարձրացած է այս մե- նաւոր եղեւինը, մեծ եւ տերեւալից, անփո- փոխ իր դաշտային եւ կորովին մէջ, աւե- լի քան երկու հարիւր տարիէ ի վեր: Եւ քա- նին՝ որ եւ ինչպիսի՜ անձեր ինձե՛ն առջ եկած նստած են ստոր շունջին տակ եւ պարզած իրենց խոկումներն ու կարգերը, գայն վկայ եւ ապաստանարան ընտրելով իրենց սրտին գաղտնիքներուն: Կը թուի ինձի, թէ ընդու- նայն տեղ կանգնած չէ ան այս բարձրութեան վրայ մնալի բլրան, այլ մասնաւոր ինձնքով մը տնկուած սնարր գահին, եւ իբր հովանի այն գլխուն, որ հոն քաշուած կը խոկայ մարդկային յարափոփոխ մտքին եւ արարչին մանկաշրջելի խորհորդներուն վրայ: Բազ- մազան տեսարանները հովիտներուն եւ հե- ռաւոր ծովուն, իրարու վրայ բարդուելով՝ կը ջնան ուղադրուծելու գրաւել իրենց վրայ: Եւ չեմ գիտեր անոնց մեծութիւնն ու բազմու-

թեւնն՝ արդեօք ընկճուած, թէ ինձի ամէնէն մերձաւորին ազդեցութեան տարուած՝ աչ- քերս կը մթննան եւ լսողութիւնս կը գործնայ սաստիկ: Կը շնչէ քամին արեւմուտքէն եւ բուռն ու կատաղի հարաւին խառնուելով՝ կը լեցնէ պա- րապը երկնքի եւ երկրի: Կը խառնակուի տե- սարանը եւ ամէն ինչ կը սկսի աղաղակել: Կը տատանին բոլոր տունկերը, խոտեր ու խոհե- ներ կը հծծեն, ու կը քշուին դէպի ծածուկ խորհր: Բլուրներ կարծես կը ցածնան ու դաշտեր կը բարձրանան. եւ այս եղեւինի ծա- ուր ահաւոր ձայնով մը կը պոռայ եւ կը շաչէ, կը շնչէ ու կը շառաչէ, կը տատանի, կը տազ- նայի, հոփտ կատաղութեան դէմ իբրեւ նպա- տակ դրուած կարծես ու անոր խաղալիքը, իր վրայ քաշելով օդեղէն հոսանքները, ինչպէս գիւղական հողմադաց մը կամ հսկայ մեքենա- յի մը անիւր, անդադար շարժելով իր ճիւղե- րով ու կողերով: Ան մերթ մինչեւ երկինք կը բարձրանայ, ծափելով գթութիւն հայցելու, եւ երբեք չի՛ լուր իր այդ ահաւոր աղաղակ- ներէն, կարծես թէ իր քնուած պահանջն ըլ- լար առիկա, եւ կամ ինք մունետիկն ըլլար այս ամառի վայրերուն: Այնքան խոր կ'արձագան- գէ իմ մէջ վայնասունը հովէն տանջուած եղե- լինին, որ միտքս գրգռուած կ'երթայ յանձիւ երեւակայական ու անշնչ վայրեր, եւ կը լեց- իմ հանելի տխրութեան մը գգացումներով, որոնց մէջ խորասուզուած՝ տակաւ-տակաւ կ'ապշիմ եւ չեմ կրնար պարզել զգացածս: Մերթ կարծես խուլ կը դառնամ, եւ մերթ ամէն ինչ յատկորէն ճաննայ կը կարծեմ, բայց կը սնայի մի: Եւ անտես արեւուն տակ ար- շաւող ամպի այս ծուկներուն՝ մերթ կը մթննամ եւ մերթ կը լուսաւորուիմ, Ստէպ- ստէպ ծոցիս տակ սիրտս կը հատաչէ, կը խո- վի եւ կը խաղաղի, կը դողայ ու կը սիրէ... Ի՛նչ ունիս, ի՛նչ կայ ո՞վ ծփակոծ ծառ, տունկերուն մէջ դուն ալ տունկ, եւ վաղեմի եւ միշտ գայար: Ինչո՞ւ հետ կանչած առան- ձին՝ այս մենաւոր բարձունքին վրայ, մատ-

նուած կամ անձատուր հանոյքին այս վայրե- նի հովին, որ մտած ճիւղերուդ եւ կողերուդ մէջ, ինչպէս հսկայ երգչոնի մը եղեւնեայ փո- դերէն, կը հնչեցնէ ընդարձակութիւնը այս ամառային, եղանակով մը անարուեստ եւ ամենարուեստ միանգամայն, անբացատրելի եւ անթարգմանելի ներդաշնակութեամբ մը, զմայելի եւ սրտառուչ: Մի գուցէ դուն, ո՞վ եղեւին, իջեւան ըլլաս վերէն զրկուած պատ- գաւորի մը, հաղորդելու մեզի հրամանները երկնաւոր թագաւորին, ինչպէս հին ատեն յատկապէս կը լուռէին անոնք ամառի վայրե- րուն մէջ, երդ դեռ չէին կանգնած պարսպա- փակ տաճարներ պաշտամունքի համար. անոր խորհրդաւոր խօսքը լսելի կ'ըլլար Բեթէլի մէջ, կամ սաւառնելով տանձնիններու եւ անտառ- ներու թաւուտքին, տերեւներու սօսափունով տարուբերուած, մերթ պատերազմի յորդորե- լով իմաստուն մանուկ հովիւր Աստուծոյ թշնամիներուն դէմ, եւ մերթ մտքի ու սրտի յափշտակիչ մարդարհուր համար: Ո՞վ ազատ մեծցած դու բարբառ, որ արհամարհե- լով ամէն բաղադրու պատուար՝ կը վագէլի ըն- դարձակ վայրեր, ինչպէս հրէջ մը անձանթ՝ դուրս ծայթբած անձանթ անդունդներէն, որոտալով ջուրերուն վրայ գետերու եւ աղ- բիւրներու, մունչելով անձայրածիր ալիքներու վրայ ծովերուն, ծծելով կողերը կաղնինե- րուն, փշրելով մատաղջ տունկերը լիբանանե- ան մարիիններու, շարժելով անապատները իրենց կարծակաւու լեռներով հանդերձ: Նոյր- ըն ինձի կը թուի հոս լսել այժմ, ինքնարուեստ- ձայն, մարդարհէն ակնարկուած, սուրհան- դակն ամառայիններուն, մահաբոյժ եւ կեն- սատիթ: «Չայն բարբառոյ յանապատի», որ կը սուրբ միշտ երկնքի եւ երկրի մէջ, գուրհով յաւիտենական մունչիւնով համաշխարհային գերեզմանին վրայ: «Ամենայն մարմին խոտ է» եւ ինչպէս ծաղիկը ու խոտը վայրի՜ կ'անցնի արագ-արագ, եւ չ'երեւիր անոր տեղը: Բայց «Բան Տեառն մնայ յաւիտեան»:

(Աշխարհարարի վերածում) Հ. ՂԵՒՈՂԱՆ

ԼՈՒՍՆԿԱՅՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՅ ՀԱՅՈՑ

Ա՛յ, իմ լուսնակ գեղեցիկ, աստուածավառ դու լապտեր Չոր առաջնորդ գիշերոյ դըրաս յերկինս ինքըն Տէր: Կոյր ըրթուծեան աչք անփակ, սրտիս այլ դու աչք կու տաս Երբ շողշողուն շղթայով կախուած շարժիս յիմ վըրաս. Քո թէլն՝ երկնից արծաթէն հիւսած, պատրոյգդ այ ոսկի, Աղամանդէ կայծակներ սփռես պատկերըդ չորս դի: Եղի մեղրի նըման կաթ մի յամանէդ յիս թափած: Կու իսողաղէ կրքերս քինչ այիք լըճիս հանդարտած: Ո՛հ, ո՞նց այժմած էիր դուն կենացդ երկրորդ գիշերին Երբ նոր քաշուած Աստուծոյ ճախարակէն ընդ երկին: Ո՛հ, ո՞նց փմայլուն էր քո լոյսն՝ էրք առաջին այն անգամ Գիշերապուարձ պլպուլիկըն ձրգեց ձայն երկնահամ: Շունչըն պայծառ քեզ նըման հովիտ է հովիտ ու խաղայր: Հեզիկ հոփով թունդ էլած մարդու առուակըն հեւայր: Չրկայր ականջ հողեղէն որ պայն լըսէր ու փառք տայր, Միայն հրեշտակը լըսէին եւ շարժէին ըզքեզ վայր: Եւ դուն լըռիկ չափեցիր պանամպ երկնից կէս բոլոր, Ծով ու ցամքի վարձագոյր բացիր, ներքեւ լըտար խոր, Երբ արեգակըն կու վայր հրեղէն ուսուցն յօդս ի վազ Չարշալուսոյ ցօղ սփռէր եւ պառաւօտըն հրրամազ...: Կացի՛ր արեւ, յետ կացիր. մ'ելլներ յերկինքըդ կապոյտ: Թող լուսնակիդ ի ման գալ դեռ ի մէջ թուխ ամպերոյտ: Կա՛ց կա՛ց լուսնակ դու յառաք, լեռնէ ի լեռ, սարէ սար, Երբ ձորերուն խորերունս անցի՛ր յուրիկ հաւասար: Հետ քեզ ունիմ եւ քանդատ, քեզ Նահապետն ունի բան, Միտըն յերկուս է ձեղքած, եւ ցուերն, ո՛հ քանապան: Պայծառ լուսնակ մի՛ փախչիր թէ տրտմութեան լըսեւ ձայն, Յաւա զաս յերկիրն Եղեմք, բայց ոչ ի հինս այն գիշեր՝ Երբ երջանիկ էր դեռ մարդ, լոկ սէր ու կեանք կու յիշէր: Ժերմակ ձաճանչոյ յայնժամ տաք էր ջրերուն ու ծաղկանց, Ուր որ կաթէր քու շաղիկ՝ կենդանութիւն էր անանց... Գարձի՛ր նայէ՛ հիմ՝ ի վայր, նայէ՛ ի փէշ սարերուն, Նայէ՛ ի տափ տաճարիս՝ եւ ի հողից գեղերուն... Ա՛հ, գերեզմանքն են Հայոց, որ ոչ են եւ յաշխարհի, Մաշած նշխարք մեր հարանց՝ թաղուած ի խոր խաւարի:

ԱՌ ԾԻՃԱՆՆ (Բնագիր)

Գարնան դըրանց անտամուտ հրեշտակիկ, Պանդուխտս՝ ողջոյն տամ քեզ պանդուխտ ծիծառնիկ: Հրեշտակ ասեմ, թեպէտ եւ սեւա եւ ի գոյն, Այլ պանդուխտի կայցե՞ քան պայն լուսագոյն: Մինչ յօրացեալ թէ հայրենիս իմ էի Հարեանցիկ աչօք ընչ քեզ հայէի: Երոպոլ ունկամք ես խնդրէի միշտ սոխակ, Երոպոլ աչօք՝ միշտ դեղձանիկն եւ թութակ: Աբորոս՝ ուղղէ քնեւս արդ այն ցայն եւ սրտիս: Ծիծառն, ապնի իբր ըզքեզ չի՛ք պանդուխտիս: Չուգբաղդիկ մեք թափառի՛մ յերկրի աստ, Ես անթեւ, դու թեւօք պարպեալ առագաստ՝ Ի հայրենեաց խնդիր յուղտը անհանգիստ: Այլ իմ վիճակըն խնդիր քան ըզքոյդ շատ է խիստ: Դու յարաչու՛ յար եւ հնարես հայրենիս,

Համհարպ գարնան՝ ուր եւ ծաղիկ՝ անդ թռանիս, Չամառ ձրմեռըն դաշնակեալ ի մի յար՝ Դու հանապազ երգես ըզպէրըն դալար: Ես յետս ընդդէմ ի հարաւոյ առ հիւսիս, Ի ծաղկաճեւ վայրաց՝ անկեալ ամալիս, Իբր յարեւելս՝ յիմ հայրենեացս յառեալ կոյս՝ Լամ առաջի՛մ եղեալ պարձիս դանդաղ յոյս: Արդ դու յիմոցս հասեալ վայրաց անձակեաց, Ասա՛ ծիծառն, ի՞նչ ողջոյն ի՞մ հայրենեաց... Ո՛հ, մի՛, մ'ասեր, յուր լեր, ըզպիրտ իմ կըտրես: Չեմք զուգաբաղդք, քի ես տրտում՝ դու՛ բախ ես: Ի դարձ հողմոյն դարձեալ դիմես դու՛ նդ հարաւ, Ես յատյանտեան ափունս՝ հայեմ քաջ անձկաւ: Իցի՛ւ թեիկ թացեալ յարտօսր իմ անմոռնչ, Կաթէիր կամ մ՛ յիմ ազարակն անտերունչ, Եւ սաէիր: Ծաղկո՛ւնք ծընգեալք, պայս ցօղ՝ ձեզ Առաքէ՛ ձեզ պանդուխտ մըջակն աղէկէդ... Այլ հաս հիւսիս: Ծիծառն՝ ե՛լ քեւտ գարնայոյն: Անյոյս յերկրէ՛՝ ես սպասեցիք երկնայոյն:

ԾԻՃՈՒՆԱԿԻՆ

(Աշխարհաբարի վերածում)

Գարնանային անտաբեր՝ հրեշտակիկ, Կ'ողջունեմ քեզ պանդուխտս՝ պանդուխտ ծիծառնիկ: Կ'ըսեմ հրեշտակ, թեպէտ սեւ եւ դուն գոյնով, Բայց պանդուխտին կա՞յ քան մ'ատկէ լուսագոյն: Մինչ ես հանգիստ հայրենիքիս մէջն էի՛ Անփոյթ աչքով կը նայէի եւ քեզի, Շոայլ ականջով կը փոստէի միշտ սոխակն, Ու կուշտ աչքով՝ միշտ դեղձանիկն ու թութակ: Կ'ողղէ աբորոս այժմ մեղքն աչքիս ու սրտիս: Ծիծառ՝ քեզի պէս ապնի չկայ պանդուխտիս: Անք բաղդակից կը թափառի՛մ յայտուտ, Ես անթեւ, դուն պարպած թեւերդ առագաստ՝ Անհանգիստ ենք հայրենիքի տենչանքով: Բայց ես քու ջով՝ դառնագոյն են վիճակով: Դուն միշտ ամբորդ՝ միշտ կը ստեղծես հայրենիք, Գարնան ընկեր՝ կը թռչիս ուր կայ ծաղիկ: Ամառ ձրմեռ գեղգեղելով միայար՝ Դուն հանապազ կ'երգես քու սէրըդ դալար: Կը դառնամ եւ մինչդեռ հիւսիս՝ հարաւէն, Ամառայինեան ծոցը՝ ծաղկեալ վայրերէն, Աչքերս յառած արեւելք իբրեւ հայրենիք, Կու յամ մեռիկ վերադարձիս յոյսն յուշիկ: Արդ դուն հասած ինձ անձկալի վայրերէն, Ըսէ ծիծառն, ի՞նչ ողջոյն իմ աշխարհէն... Բայց ո՛հ, լըռե՛, մի՛ ըսեր, սիրտս կը փշրես: Չեմք բախտակից, ես տրտում՝ դուն ուրախ ես: Հովի դարձին հարաւ կ'երթաս դուն արեւն Ես առյանտեան ափին՝ կ'հալիմ անձուկէն: Երանի՛ թեւդ արցունքիս մէջ յուր թրջած՝ Յօղէիր շիթ մ'ազարակիս վրայ լըտած, Եւ բսէիր: Ծիծառ ծաղկունք, այս ցօղ ձեզ Կը զրկէ՛ ձեր պանդուխտ մըջակն աղէկէդ...: Եկաւ հիւսիս: գրնաց ծիծառ գարնան հետ: Երկրէն անյոյս՝ ես կը սպասեմ երկնադէտ:

Հ. ՂԵՒՈՂԱՆ

Մանկապատանեկան

ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԻՆ ԳԱՆՁԵՐԷՆ ԶՈՒՐԸ

Գիտե՞ի՞ր, քե 2003 տարին ՄԱԿի կողմէ յայտարարուած էր իբրեւ Անուշ ջուրի միջազգային տարի:

Անուշ ջուրը մեր մոլորակի արժէքաւոր տարրերէն է, որ ժամանակի ընթացքին պիտի դառնայ միշտ աւելի հազուադէպ: Հետեւեալը ՄԱԿը (Միացեալ Ազգերու կազմակերպութիւն, որ կը զբաղի ջրի հարցերով) որոշեց 2003 տարին որդեգրել իբրեւ, անուշ ջուրի միջազգային տարի՝ երկիրները հրաւիրելով կեդրոնանալու յատկապէս այս հարցին վրայ եւ փորձելով լուծումներ գտնել:



նոսներէն եւ ծովերէն, հետեւաբար աղի է: Այս ջուրը չի խմուիր: - Այս ջուրէն 2,5 առ հարիւրը միայն բնական է: Սակայն այս քանակին երեք քառորդը սառած է:

Մարդոց կողմէ անուշ ջուրի սպառումին համար կը մնայ... 1 առ հարիւրը:

Աշխարհի բնակչութեան 40 առ հարիւրը ջուր գտնելու քիչ թէ շատ ծանր հարցեր պիտի ունենայ յառաջիկայ տարիներուն ընթացքին:

- 2025 թուականին ջուրը պիտի պակսի յատկապէս Միջին Արեւելքի եւ Ափրիկէի մէջ:

- Աշխարհի մէջ 1 միլիոն մարդ օրական միայն 20 լիթր ջուրով կ'ապրի: Մինչ ամերիկացի մը օրական միջին հաշուով 300 լիթր ջուր կը սպառէ:

- 9 երկիրներ՝ Պրագի, Ռուսիա, Միացեալ Նահանգներ, Քանադա, Չինաստան, Բոլիւմպիա, Ինտոնեզիա, Փերու եւ Հնդկաստան իրարու հետ կը բաժնեկցին աշխարհի ջուրի աղբիւրներուն 60 առ հարիւրը:

- 1993 թուականէն ի վեր 22 Մարտը հռչակուած է «Ջուրի Միջազգային Օր»:

Անուշ ջուրի միջազգային տարուան նպատակներն են՝ Ժողովուրդներուն իմացնել ջուրին կապուած վտանգներուն մասին, անոնց ծանօթացընել ջուրին հարցերը եւ լուծումներ գտնել, որպէսզի վերջապէս ամէն մարդ իր տրամադրուած թեան տակ ունենայ անուշ եւ ըմպելի ջուր: Ինչպէս նաեւ՝ յատկապէս անգրագիտացող, թէ ջուրը թանկեղէն է, եւ մարդիկ այս իրողութեան ալիքէս շատ ուշադրութիւն չեն դարձնել:

ԳԻՏԵԻ՞Ր, ԹԵ... - Երկրագունդին 70 առ հարիւրը ծածկուած է ջուրով: - Այս ջուրին 97,5 առ հարիւրը կու գայ ուկիսական ջուրով:

ԻՆՉՈՒ ԿԱՐԳ ՄԸ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԿԸ ԾՓԱՆ



• Երբ առարկայ մը կը դնենք ջուրին մէջ, անոր ծանրութիւնը գայն դէպի խորքը կը տանի: Սակայն, միեւնոյն ժամանակ, ջուրը գայն կը հրէ դէպի վեր: Որքան առարկայ մը մեծ ըլլայ, այնքան այդ հրող ուժը աւելի զօրաւոր կ'ըլլայ:

• Եթէ առարկան շատ ծանր է, քան ջուրին հրող ուժը, առարկան կ'ընկըղկը կը, ան նուազ ծանր է, քան՝ այն ջուրը, որուն տեղը կ'առնէ ան, ջուրին հրող ուժը շատ աւելի մեծ կ'ըլլայ, եւ առարկան կը ծփայ:

ԻՆՉՈՒ ՄԵՆՔ ԶԵՆՔ ՅԻՇԵՐ ՄԵՐ ՄԱՆԿՈՒԹԻԻՒՆԸ

Երբ քեզի պատմութիւններ կը պատմեն, թէ ինչ կ'ընէիր, ինչ կը սիրէիր, երբ երեխայ էիր, դուն կը փորձես յիշողութեանդ մէջ փնտռել... Սակայն քեզի համար անկարելի է բան մը յիշել: Ինչ տարօրինակ բան: Կարծէք, երբ մենք երեխայ էինք, բան մը չէինք յիշեր:



Երբ մենք կը ծնինք, մեր ուղեղէն ամբողջ մաս մը տակաւին ամբողջութեամբ անած չըլլար: Այդ բաժինն է, որ մեզի կարելիութիւնը կու տայ երկար ժամանակ յիշատակները պահելու: Հետեւաբար երեխան չի կրնար պատկերներ չի նկատել իր մտքին մէջ՝ ետքը գանտնք յիշելու համար: Ան ահիկա պիտի սորվի ընել կամաց-կամաց, ինչպէս կը սորվի քալել, խօսիլ կամ բաղնիք երթալ: Այս ձեւով, անոր յիշողութիւնը կը սկսի լաւ գործել մօտաւորապէս երեք տարեկանին:


Սակայն, երբ երեխայ ենք, մեր ուղեղը շատ բաներ կ'արձանագրէ առանց մեր գիտնալու. ձայներ, խօսքեր, դէպքեր, հոտեր, գոգացումներ, զորս կը գգանք սիրած կամ մեզի սիրող անձի մը նկատմամբ: Աստիճաբար են, զորս մենք կը կարծենք մոռցած ըլլալ, կամ՝ կորսնցուցած, սակայն անոնք կրնան յանկարծակիօրէն վերայատնուել մեր կեանքին ընթացքին:

Եթէ այս «գաղտնի դարակալ»ին մէջ շատ գէշ յիշատակներ ըլլան, անոնք կրնան մեր ուրախութեան արգելք ըլլալ նոյնիսկ տարիներ ետք: Սակայն, եթէ մենք կեանքը կը սիրենք, յաճախ որովհետեւ մենք ուրախ մանկութիւն մը ունեցած ենք, նոյնիսկ եթէ մենք ատիկա չենք յիշեր:

ԻՆՉՊԵՍ ԿԸ ԶԱՓԵՆ ԼԵՌՆԵՐՈՒՆ ԲԱՐՉՐՈՒԹԻՒՆԸ

Այժմ ամէնէն ճշգրիտ չափերը կ'առնուին արբանեակներուն կողմէ: Այսպէս, կը գործածուի յատուկ սարք մը:


Այս սարքը կը գործածուի օդանաւային թռիչքներու պարապային, եւ հնարուած է 1844 թուականին: Ան կը չափէ օդին ճնշումը հերթը վիսարալով (HPA): Եւ որովհետեւ մենք գիտենք, թէ ծովուն մակարդակին վրայ 1013, 25 HPA կ'արձանագրուի,



բարձրութիւն չափող սարքը կրնայ բաղադրուիլ չափել իր գտնուած վայրին բարձրութիւնը: Իսկ այս գիւտէն առաջ մարդիկ ինչպէս կը կատարէին հաշիւները: Քրիստոսէ առաջ արդէն լեռներուն բարձրութիւնը կը հաշուուէր շնորհիւ եռանկիւնաչափութեան (թրիկոնոմետրի), որ եռանկիւնները չափելու գիտութիւնն է: Այս հաշիւներուն շնորհիւ մենք կրնանք նոյնիսկ գիտնալ լուսինին վրայ գտնուող լեռան մը բարձրութիւնը:

ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ԾՈՎԵՐՈՒՆ ՄԵՋ... ...ՆՈՅՆ ՔԱՆԱԿՈՎ ԱՂ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ՞

Ո՛չ, գոց ծովերը շատ աւելի աղոտ են միւս ծովերէն: Գոց ծովերուն մէջ ջուրը աւելի կը շոգիանայ, եւ որովհետեւ աղը չի շոգիանար, անոր խտութիւնը կը շատնայ:




Այս ձեւով, Մեքսիկո ծովը, որ տաք շրջանի մը մէջ կը գտնուի, իսկական աղի լիւծ մըն է: Ջուրի իւրաքանչիւր լիթրի մէջ կայ 275 կրամ աղ, մինչդեռ միջին հաշուով մոլորակին ծովերուն աղի քանակը ութ անգամ նուազ է (35 կր/լիթր): Մինչ Պալմիթո ծովը, որ կը գտնուի Եւրոպայի հիւսիս-արեւմտեայ մասին, զորեթէ անուշ ջուրի ծով մըն է, իր 4 կր/լիթր աղով: Այս ծովը կը ստանայ բազմաթիւ գետերու ջուրը, եւ որովհետեւ այդ շրջանին մէջ օդը շատ ցուրտ է, ջուրը նուազ կը շոգիանայ:


ԻՆՉՈՒ ԿԱՐԳ ՄԸ ԾՈՎԵՐ ՈՒՆԻՆ ԳՈՅՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐ

Ծովերը կը կրեն անուններ, որոնք յաճախ կապուած են իրենց գտնուած շրջանին (Միջերկրական, Կասպից, Պալմիթո): Սակայն կարգ մը ծովեր ալ կոչուած են ըստ իրենց գոյնին: Այս ձեւով, Կարմիր ծովուն անունը յառաջացած է յատուկ ջրախտէ մը, որ երբ մեռնի, կարմիր-սրճագոյն երանգ մը կը ստանայ: Սպիտակ ծովը ձեւով կը ծածկուի սառույցով: Իսկ չինական Հուանկ Զօ գետը դեղին գոյն մը ունեցող հող կը թափէ Դեղին ծովուն մէջ: Եւ վերջապէս, Սեւ ծովուն խորքը կ'աղմըլած է մուխ գոյնով կապուած ցեխ մը:


Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնա՞ս օգնել այս ճամբորդներուն՝ շոգեկանքի կայարանը հասնելու համար: Անոնք պետք է հետեւին 11ի տախտակի պատկանող թիւերուն:



Կրնա՞ս գտնել պզտիկ պարիկին համապատասխանող շուքը:



Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյուրիւն ունեցող ութ տարբերութիւնները:


Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒՎԱՍԵԱՆ

ԱՆՍԻՄԱԼ ԳՐԵՆՔ

Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես. մասնակցե՛ «Պատիկ - Վստիկ»ի հայերէն ուղղագրութեան մրցումին:

- Մրցումին կրնան մասնակցել 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:
- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 10 Նոյեմբերէն 2 Դեկտեմբեր. հեռաձայնելով 01 - 260115 թիւին, երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 3:00էն 5:00:
- Մրցումը տեղի կ'ունենայ կիրակի, 7 Դեկտեմբերին, Մեսրոպեան վարժարանի սրահին մէջ, կէսօրէ ետք, ժամը 3:00էն 4:00 4րդ դասարան, 4:00էն 5:00 5րդ դասարան, 5:00էն 6:00 վեցերորդ դասարան:
- Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժէքաւոր նուէր մը. իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ:
- Յաւելեալ տեղեկութիւններու համար հետեւիլ «Ազգակ»ին:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՈԼԵՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ



Երիտասարդության եւ մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց վոլեպոլի ֆետերասիոնի նախագահն ու անդամները, անոնց հետ արծարծելով խաղի զարգացումին զարկ տալու միջոցներ գտնելու հարցը:

Ֆետերասիոնի պատուիրակութիւնը նախարար Յովնանեանէն ստացաւ վոլեպոլի մարզածելին յատկացած տարեկան նիւթական օժանդակութիւնը, եւ շնորհակալութիւն յայտնեց անոր «բոլոր մարզածեւորուն նկատմամբ իր ցուցարբերած հոգատարութեան համար»: Իր կարգին նախարար Յովնանեան զրուատիքով արտայայտուեցաւ վոլեպոլի տարածելու ուղղութեամբ ֆետերասիոնի կատարած աշխատանքներուն մասին:

ԹԵՆԻՍ. ՄԱՍԹԸՐԶ

ՀԱՅՎԱԿԱՆ «ՏԵՐՊԻ»Ն ՎԵՐՋ ԳՏԱԻ ԱԿԱՍԻԻ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ



Նալպանտեան «Հիմա՛ ինչու չես ծափեր»

Երէկ, առաւօտեան կանուխ ժամերուն տեղի ունեցաւ Անտրէ Ակասի-Գաւիթ Նալպանտեան տաք ճակատումը, որ սուր պայքարէ ետք վերջ գտաւ Ակասիի յաղթանակով:

Արդարեւ, առաջին սէթը թայպլէյթով (12/10) շահելէ ետք Ակասի 3-6 արդիւնքով տեղի տուաւ երկրորդ սէթին, սակայն ինքզինք հաւաքելով երրորդը արտետեց ի նպաստ իրեն:

Հարկ է ըսել, որ Նալպանտեան դժբախտ գտնուեցաւ: Իրաւարարը քանի մը վճռական պահերու անարդար գտնուեցաւ պայքարի պատճառով արդէն դիրքորոշեց Նալպանտեանին: Աւելի՛ն, առաջին շարքի վրայ նստած ամերիկացի միլիառատէր ձիւ Մըքլինկվէյլ, որուն 10 միլիոն տոլարի նուիրատուութեամբ կառուցուած է Մասթըրզը հիւրընկալող դաշտը, տեսաբար կը խանգարէր Նալպանտեանը իր «ծափող-չոյններով»: Մրցումի ընթացքին եղաւ պահ մը երբ Նալպանտեան, գեղեցիկ հարուածով մը կէտը շահելէ ետք դարձաւ Մըքլինկվէյլի եւ գրոսը: «Հիմա ինչու չես ծափեր»:

Յամենայնդէպս, Նալպանտեան այս տարեշրջանին փաստեց թէ կը հանդիսանայ թենիսի աշխարհի հպորագոյն մարզիկներէն մէկը: Կ'ակընկալենք, որ տարին դասաւորման առաջին ութեակին մէջ աւարտած Նալպանտեան ակընկալ տարիներէն արագնէ մասնագէտներու ակընկալ տարիներէն էր եւ կը սլանայ «վեր, աւելի՛ վեր»:

Նշենք, որ երէկուան մրցումներուն Կիլեոս Բորիս 6-2, 6-3 արդիւնքով տապալեց Քարլոս Մոյան:

ԵՒՐՕ-2004

ԱՅՍՕՐ՝ ՎՃՈՒԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄՆԵՐ

Սպանիա, Հոլանտա, Ռուսիա եւ Խրուաթիա 5 օրուան մէջ 2 մրցում խաղալով պիտի փորձեն ապահովել Եւրո-2004ի ախոյեանութեան իրենց տոմարը: Եւրո-2004ի վտու մի մրցումներուն ծիրէն ներս ոչ համոզիչ խաղարկութիւն ցուցաբերած այս խումբերուն վերջին առիթը կը հանդիսանան Նոյեմբեր 15ին եւ 19ին (երբ ու դարձ) տեղի ունենալիք մրցումները, «որսալու» համար Եւրո-2004ի ախոյեանութեան մէջ իրենց տեղը:

Ամէնէն մեծ մարտահրաւերը ուղղուած է Սպանիոյ, որ պիտի ճակատի Նորվեգիոյ անակնկալներ ստեղծող կազմին դէմ: Հոլանտայի ճակատումը Սկոտլանդի դէմ նոյնպէս դիրքին պիտի չըլլայ, սակայն հոլանտացիք առնուապէս դարձի մրցումը իրենց դաշտին վրայ խաղալու առաւելութիւնը պիտի ունենան:

Կ'ակնկալուի, որ Ռուսիա եւ Թուրքիա համեմատաբար աւելի դիրքութեամբ ապահովեն իրենց տոմարը:

Ստորեւ կը ներկայացնենք այսօր «Եւրո-2004»ի ծիրէն ներս տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (Պէյրուի ժամանակացոյցով).

Սպանիա - Նորվեգիա	ԺԱՄ
Սկոտլանդ - Հոլանտա	17:00ին
Ռուսիա - Կալէս	18:00ին
Խրուաթիա - Սլովենիա	18:30ին
Լատվիա - Թուրքիա	20:15ին

«ԿՈՆՏԵՆ ԿՈՆԸ» ՓՈՒՍԱՐԻՆՈՒԵՑԱԻ «ՍԻԼՎԵՐ ԿՈՆ»ՈՎ

ԵՆ. Է. ԷՖ. Ա. յայտարարեց թէ Եւրո-2004ի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան այս շաբաթավերջին եւ գալ շաբաթ (15 եւ 19 Նոյեմբեր), գործադրութեան պիտի դրուի «Սիլվեր Կոն»ի օրէնքը:

Այս օրէնքին համաձայն, 90 վայրկեանները եթէ հաւասարութեամբ վերջ գտնեն, խումբերը պիտի խաղան յաւելելալ 15 վայրկեաններ, որոնց ընթացքին աւելի կոլեր նշանակող խումբը յաղթական պիտի հռչակուի: Եթէ դարձեալ հաւասարութիւն տիրէ, պիտի խաղցուի երկրորդ 15 վայրկեաննոց հանգրուան մը եւ ապա՝ պիտի դիմուի փենալթիի:

ՊԱՍՔԵԹՊՈԼ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂՋԿԱՆՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

30 Նոյեմբերին կը սկսի պասքեթպոլի Լիբանանի աղջկանց ախոյեանութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն հանգանգան «Երթ խումբեր» 4: Մ. Ը. Մ. Անթիլիաս, Անդրանիկ Սին Էլ Ֆիլ եւ Անդրանիկ Պէյրուի:

Ստորեւ կը ներկայացնենք երթի մրցումներուն յայտագիրը.

ԱՌԱՏԻՆ ՇԱՐՔԸ	ԹՈՒԱԿԱՆ	ԺԱՄ	ՄՐՑՈՒՄ	ԴԱՇՏ
30/11/2003	14:30	Ա.Գրանիկ Ս. - Ա.Գրանիկ Պ.	Ա.Գրանիկ	
	20:00	Սատարա - Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս	Սաթէս	
2/12/2003	18:00	Սաթէս - Ա.Գիպալ	Ղազիր	
	20:00	Ա.Գնա Նիպրոն - Ռիատի	Մըրի Համալիր	
ԵՐԿՐՈՐԳ ՇԱՐՔԸ				
7/12/2003	14:30	Ա.Գրանիկ Պ. - Ա.Գիպալ	Ա.Գրանիկ	
	19:00	Ա.Գրանիկ Ս. - Սատարա	Ա.Գրանիկ	
11/12/2003	18:00	Ռիատի - Սաթէս	Ռիատի	
	20:00	Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս - Ա.Գնա Նիպրոն	Մըզհէր	
ԵՐՐՈՐԳ ՇԱՐՔԸ				
13/12/2003	14:30	Ա.Գիպալ - Ռիատի	Ջահլէ	
	18:00	Սատարա - Ա.Գրանիկ Պ.	Սաթէս	
17/12/2003	18:00	Սաթէս - Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս	Ղազիր	
	20:00	Ա.Գնա Նիպրոն - Ա.Գրանիկ Ս.	Մըրի Համալիր	
ՉՈՐՐՈՐԳ ՇԱՐՔԸ				
19/12/2003	20:00	Ա.Գրանիկ Պ. - Ռիատի	Ա.Գրանիկ	
	20:00	Սատարա - Ա.Գնա Նիպրոն	Սաթէս	
20/12/2003	20:00	Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս - Ա.Գիպալ	Մըզհէր	
	20:00	Ա.Գրանիկ Ս. - Սաթէս	Ա.Գրանիկ	
ՀԻՆԳԵՐՈՐԳ ՇԱՐՔԸ				
3/1/2004	19:00	Սաթէս - Սատարա	Ղազիր	
	20:00	Ա.Գնա Նիպրոն - Ա.Գրանիկ Պ.	Մըրի Համալիր	
4/1/2004	19:00	Ա.Գիպալ - Ա.Գրանիկ Ս.	Ջահլէ	
	20:00	Ռիատի - Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս	Ռիատի	
ՎԵՏԵՐՈՐԳ ՇԱՐՔԸ				
7/1/2004	18:00	Ա.Գրանիկ Պ. - Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս	Ա.Գրանիկ	
	20:00	Ա.Գրանիկ Ս. - Ռիատի	Ա.Գրանիկ	
11/1/2004	20:00	Սատարա - Ա.Գիպալ	Սաթէս	
	20:00	Ա.Գնա Նիպրոն - Սաթէս	Մըրի Համալիր	
ԵՕԹՆԵՐՈՐԳ ՇԱՐՔԸ				
14/1/2004	20:00	Սաթէս - Ա.Գրանիկ Պ.	Ղազիր	
	20:00	Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս - Ա.Գրանիկ Ս.	Մըզհէր	
15/1/2004	20:00	Ա.Գիպալ - Ա.Գնա Նիպրոն	Ջահլէ	
	20:00	Ռիատի - Սատարա	Ռիատի	

ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԱՐԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՄՈՆ ԼԱ ՍԱԼԻ ՄԷՋ

11էն 17 Դեկտեմբերին, Լիբանանի պիտի հիւրընկալէ փինկ փոնկի արաբական աշխարհի տղոց եւ աղջկանց ակումբներու ախոյեանութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն տղոց 22 եւ աղջկանց 12 ակումբներ (մրցանիշ մը):

Մոն Լա Սալի (Այն Սաատէ) մէջ տեղի ունենալիք այս ախոյեանութեան տղոց մրցումներուն Լիբանանը պիտի ներկայացնեն Անդրանիկ եւ Ռիատի, իսկ աղջկանց մրցումներուն՝ տիտղոսակիր Հ. Մ. Ը. Մ. ինչպէս նաեւ Ռիատա Քֆարշիմա:

ՖՈՒԹՊՈԼ. ԲԱՐԵՎԱՍՏԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ԱՅՍՕՐ՝ ԳԵՐՄԱՆԻԱ - ՖՐԱՆՍԱ ՃԱԿԱՏՈՒՄ

Եթէ այսօր Ֆրանսա յաջողի պարտութեան մատնել Գերմանիան, ապա յաջորդական 13 յաղթանակներ արձանագրած ըլլալով մրցանիշ մը հաստատած պիտի ըլլայ:

Եւրո 2004ի նախապատրաստութեան ծիրէն ներս կատարուող այս մրցումը ուժի ցուցադրութիւն մը պիտի ըլլայ մարզիչ Ժաք Սանթիանի համար, որ զգուշացուց թէ՛ «գերմանացիները տակաւին մեծ սնուններ են Եւրոպայի մէջ»:

Ստորեւ շաբաթավերջի բարեկամական մրցումներու յայտագիրը (բոլոր ժամերը՝ Պէյրուի ժամանակացոյցով).

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Գերմանիա - Ֆրանսա	17:00ին
Հունգարիա - Էսթոնիա	17:00ին
Փորթուգալ - Յունաստան	17:00ին
Չեխիա - Քանադա	19:00ին
Լեհաստան - Սերպիա Մոնթենեկրո	17:00ին
Անգլիա - Դանիա	18:00ին
Իտալիա - Ռումանիա	21:45ին

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՀԻՍԹԸՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ, ՓՈՐԹԼԵՆՏ ՅԱՂԹԵՅ



Փորթլենտ Թրէյլ Պլէյզըզի մարզիչ Մորիս Չիքս

Ին. Պի. Էյ. երէկուան մրցումներուն Հիւսթըն Ռոքէթց կրեց տարեշրջանի իր երկրորդ պարտութիւնը 86-97 արդիւնքով տեղի տալով Տայասի կազմին դիմաց: Փորթլենտ Թրէյլ Պլէյզըզը աւելի բախտաւոր գուրս եկաւ երբ օվըր քայմի ընթացքին յաջողեցաւ պարտութեան մատնել Սաքսոններին:

Շիքսօ Պուլզ կրեց եղանակի իր ճիշդ պարտութիւնը եւ 89-92 արդիւնքով տեղի տուաւ Միլեստոթայի դէմ:

ՃԱՏՐԱԿ. ՍԱՐԳ - ՀԱՍԱԿԱՐԳԻՉ ԳԵՐՃԱԿԱՏՈՒՄ

ԳԱՍՊԱՐՈՎ ԽՈՆԱՐ ՀԵՑԱԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻՆ ԴԻՄԱՅ...



Գասպարով խոնարհեցաւ...

Նիւ Եորքի մէջ տեղի ունեցող մարզ - համակարգիչ գերճակատումի երկրորդ մրցումին Կէրի Գասպարով պարտութիւն մը կրեց գերմանական «Ֆրից Էփս» համակարգչային ծրագիրին:

Արդարեւ, սկզբնախաղին լաւ դիրք ունենալից ետք Գասպարով 32րդ շաբթումին գործեց մահալու սխալ մը, կորսնցնելով գինուտը մը եւ... խաղը: Գասպարով յանձնուեցաւ 7 շաբթում ետք:

Այսպիսով Գասպարով - Ֆրից ճակատումի արդիւնքը եղաւ 1,5-0,5 ինչպստ սիլբոնէ հրէշին, տրուած ըլլալով որ առաջին խաղը վերջ գտած էր հաւասարութեամբ: Մնացեալ երկու ճակատումները տեղի պիտի ունենան 16 եւ 18 Նոյեմբերին:

ՀԱՍՏԱՐԵԼՈՒ ՈՒԲԱՐԶԻՆ ՄԵԶ

ՊՈՒՇ ԵՒ ԸԱՐՈՆ ԱՄԵՆԵՆ ԱՏԵԼԻ ԱՆՉՆԱԿԱՆ ԲԱՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԵԶ

Իրանի հոգեւոր գերագոյն պետ Այաթոլլա Ալի Քարենիի երէկ Մ. Նահանգներու նախագահ ձորճ Պուշ Եւ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնը նկարագրած է իբրեւ իսլամական աշխարհին մէջ ամենէն աւելի առեւտրային անձնաւորութիւնները, յայտնելով, որ Ուաշինկթըն կը վարկաբեկուի Միջին Արեւելքի մէջ իր քաղաքականութեան պատճառով:

ՈՒԱՇԻՆԿՅՈՒՆ ԿԸ ՊՆՂԷ, ՈՐ ԻՐԱՆ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԶԵՆՔԵՐ ՈՒՆԻ

Մինչ այդ, Մ. Նահանգներ Հինգշաբթի օր շարունակած են պնդել, թէ Իրան կը շարունակէ կորիզային զէնքերու իր ծրագիրը հետապնդել, սակայն անոնք ուժգին հերքած են, թէ ՄԱԿի կորիզային ուժանիւթի գործակալութեան եւ Ուաշինկթընի միջեւ վիճ մը կայ:

Միաժամանակ, արտաքին գործոց նախարարութիւնը յայտնած է, թէ Ուաշինկթընի կողմէ ՄԱԿի գործակալութեան եզրակացութիւնը լիովին հերքուած չի նշանակեր, թէ անիկա որոշած է մղել գործակալութեան կառավարչներու մարմինը, որ Իրանի կորիզային ծրագիրին հարցը ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին փոխանցէ:

Այդ մարմինը յառաջիկայ շաբաթ Վիեննայի մէջ ժողով մը պիտի գումարէ տեղեկագիրը քննարկելու համար եւ թէ անիկա եզրակացնէ, որ Իրան ընտանաբար չի կորիզային զէնքերու տարածումը արգելող (Էն. Փի.թի.) համաձայնագիրին պայմանները, հարցը ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին պիտի փոխանցուի:

Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար Ճոն Պոլթընը Չորեքշաբթի օր յայտնած էր, թէ «պարզապէս անկարելի է հաւատալ ՄԱԿի գործակալութեան եզրակացութեան»:

Ամերիկեան արտաքին գործոց նախարարութեան փոխբանբեր Ատմը Իրելի յտակօրէն շեշտած է, որ Իրան կորիզային զէնքերու ծրագիր մը ունի եւ թէ անիկա «որոշ ժամանակ մը ի վեր միջազգային համայնքը կը խաբէ ծրագրի զօնով»:

ՄԱԿի գործակալութիւնը Հինգշաբթի օր մերժած է ընդունել Պոլթընի ամբաստանութիւնը, շեշտելով, որ զօրավիզ կը կանգնի տեղեկագիրին:

ԵՐԿՈՒ ԶԱՓ, ԵՐԿՈՒ ԿԵՒՈ

Միւս կողմէ, Արարական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա յայտնած է, որ կեղծաւորութիւն է Իրանը ամբաստանել կորիզային զէնքեր ձեռք բերել փորձելու յանցանքով, մինչ Իսրայէլի դէմ նման ամբաստանութիւն տեղի չունենար:

Գահիթի մէջ Իրանի արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան մէջ պաշտօնատարին հետ տեսակցութեան մը ետք, Մուսա դիտել տուած է, որ երկու չափ, երկու կշիռի քաղաքականութիւն «կը տեսնենք, երբ երկրի մը դէմ ամբաստանութիւն կը կատարուի, մինչ Իսրայէլի գծով լուծութիւն կը կատարուի, շեշտելով, որ Իսրայէլ հաւաքական բնաջնջումի զէնքեր ունի:

ԽԱՐԱԶԻ ԶԱՓՈՒՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԸ ԴՊՏԷ

Մինչ այդ, Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Նարագի երէկ կոչ ուղղած է ձափոնի գործակցութեան՝ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէջ կորիզային իր ծրագրի զօնով քննարկում մը կանխարգելելու համար:

Վարչապետ Եւոսիլիբո Քոյուզմիլի եւ արտաքին գործոց նախարար Եորիբո Քաուակուչիի հետ առանձին տեսակցութիւններէ ետք, Նարագի պատրաստակամութիւն յայտնած է ընդունելու աւելի խիստ քննութիւններ՝ ՄԱԿի քննիչներու կողմէ:

Ձափոն կը նկատուի իբրեւ Իրանի եւ Մ. Նահանգներու միջեւ միջոցառումներու պահանջներու ստանձնող երկրի մը:

7 ԶԻՆԵԱԼՆԵՐ ՄԻՆԶԵԻ 15 ՏԱՐՈՒԱՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՆ

ՄՈՍԿՈՒԿԱ, 14 (ԱՅՓ).- Բուսական աւտան մը Ուրբաթ օր մինչեւ 15 տարուան բանտարկութեան վճիռ արձակած է 7 պինդախնամ ղեկ, որոնք «սահաբեկչութեամբ» ամբաստանուած են Չեչենիայի մէջ:

Այդպէս ղեկները, վրաստանէն, Կապարիստիս - Պայքարային եւ Տաղստանի պինդախնամներն են ամբաստանուած են պինդախնամ ընդունութեամբ, աւազակութեամբ եւ ռուս պինդախնամներու սպանութեան յանցանքներով:

Անոնք ամբաստանուած են անցելով Սեպտեմբերի վրաստանի Փանքիսի հովիտէն Չեչենիա թափանցած շուրջ 300 պինդախնամ շարքին եղած ըլլալու յանցանքով:

Բուսական աղբիւրներու համաձայն, Ինկուշեթիոյ Կայաքի գիւղի շուրջ մարտուած սաստիկ բախումին պատճառով, առնուազն 17 պինդախնամ եւ 100 ընդուն սպանուած են:

Բուսական ուղղաթիւնը մը վար առնուած է բախումին ընթացքին:

Այլ պարագայում մը, հիւսիսային Կովկասի մէջ «հակահաբեկչական գործողութիւններու» պատասխանատու բանակային միաւոր մը 3 միլիոն ռուբլի (100 հազար տոյար) վարձատրութիւն խնստացած է տեղեկութիւններու փոխարէն, որոնք կրնան յանգիլ Չեչենիայի մէջ իբրեւ վարձատր գործող սեղանի քաղաքացիի մը՝ Ապու Ռայիտի «էկզորսիան»:

ԻՐԱՔԻ ԻՇԽՈՂ ԽՈՐՀՈՒՆ Կ'ՈՂՋՈՒՆԵ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱԳ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒԱՇԻՆԿՅՈՒՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Իրաքի իշխող խորհուրդը ողջունեց իշխանութեան արագ փոխանցում կատարելու Ուաշինկթընի որոշումը, որ փոխանցում է ամերիկացի կառավարչի Փոլ Պրեմերի: Իշխող խորհուրդի անդամ Տարա Նուրէտտինը ըսաւ, որ Իրաքեան խորհուրդը շատոնց կը պահանջէ իշխանութեան փոխանցումը, յատկապէս ապահովութեան մարզին մէջ:

Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշ Եւ ապա իր անվտանգութեան հարցերու անոր խորհրդատուն Բոնտոյի Պայս Հինգշաբթի օր հաստատած էին, որ Իրաքցիներուն յաւելեալ իշխանութիւն պէտք է յանձնուի՝ ղեկավարելու համար իրենց երկիրը: Միացեալ Նահանգներու գլխաւոր դաշնակից Բրիտանիա եւս պորակցութիւն յայտնեց ամերիկեան որոշումին:

«Տը Ուաշինկթըն Փոսթ» կը գրէր, որ ամերիկեան իշխանութիւններուն նպատակն է յայն տարողութեամբ գերիշխանութիւն տալ Իրաքեան իշխող մարմինի մը մինչեւ յառաջիկայ տարուան կէսը: Օրաթերթին համաձայն, Ուաշինկթըն կ'ուզէ մինչեւ նախագահական ընտրութիւնները (Նոյեմբեր 2004), իշխանութիւնը ամբողջութեամբ իրաքցիներուն յանձնել:

«Նիւ Եորք Թայմս» իր կարգին կը գրէր, որ ամերիկացիները պիտի փորձեն Իրաքի մէջ ընտրութիւնները կայացնել յառաջիկայ տարուան ստաշին կիսուն եւ քաղաքային իշխանութիւնը յանձնեն առժամայ կառավարութեան մը՝ սահմանադրութեան մշակումէն առաջ: Իրաքի իշխող խորհուրդի անդամները կը նախընտրեն «Նիւ Եորք Թայմս»ի ծրագիրը: Անոնցմէ մէկը ըսաւ, որ իշքալ ծրագիրը կը համընկնի Յրանսայի եւ Ապահովութեան Խորհուրդի անդամ այլ երկիրներու ներկայացուցած առաջարկներուն: Յրանսայի արտաքին գործոց նախարար Տոմիսթր Տը Վիլիսն կոչ ուղղած էր խորհրդակցական խորհուրդի մը եւ ժամանակաւոր կառավարութեան մը յառաջացման՝ նախապատրաստելու համար ընտրութիւնները:

Իշխող խորհուրդի անդամ Նուրէտտինը ըսաւ, որ ֆրանսական առաջարկը յարմար է, որովհետեւ այս հանգրուանին երբ ապահովութիւնը հաստատ չէ, կարելի չէ ընտրութիւններ կայացնել, հետեւաբար, ճիշդ պիտի ըլլայ առժամայ կառավարութեան մը նշանակումը՝ պատրաստելու համար ընտրութիւնները: Նուրէտտին շեշտեց սակայն որ սահմանադրութեանն ու ընտրութիւններէն աւելի կարեւոր հարց կայ. ժողովուրդին պորակցութիւնը եւ միջազգային ընտանիքին կողմէ ճանաչումը: Իշխող խորհուրդը տակաւին չէ յաջողած ապահովել ո՛չ իրաքցի ժողովուրդին ամբողջական պորակցութիւնը, ոչ ալ՝ միջազգային ընտանիքին ճանաչումը:

Միւս կողմէ, ամերիկեան ուժերը երէկ շարունակեցին յարձակողական ըմբոստ ուժերուն դէմ: Ամերիկեան ուժերու հրամանատարութիւնը յայտնեց, որ երեք պինդախնամ վիրաւորուած են Մուսուլի մէջ, ուր ռումբ մը պայթած էր Հինգշաբթիին Ուրբաթ լուսոց գիշերուան ընթացքին: Մինչ այդ, շրջանին մէջ գտնուող ամերիկեան ուժերը ձեռք բերեցին նախկին վարչակարգի հետեւորդներէն 78 հոգի: Դաշնակից ուժերը յայնժամի արշաւի մը ձեռնարկած են Սատամ Հիւսէյնի հաւատարիմ ուժերուն դէմ: Իսկ Թիքրիթի մէջ ձեռք բերուեցան չորս իրաքցիներ, որոնք ենթադրաբար մեղսակցած են ամերիկեան ուղղաթիւն մը վար առնելու գործողութեան, որ 16 ամերիկացի զոհեր պատճառած էր: Թիքրիթի մէջ ամերիկեան ուղղաթիւնը կրակ բացուեցաւ նաեւ խումբ մը իրաքցիներու վրայ՝ սպաննելով եօթը հոգի: Ըստ ամերիկեան աղբիւրներուն անոնք կը պատրաստուէին յարձակումի մը ամերիկեան պինդախնամ խորհուրդի մը դէմ:

Պարսի մէջ, ուր իտալական ուժերուն դէմ յարձակում գործուած էր քանի մը օր առաջ, ապահովութեան արտակարգ միջոցառումներ որդեգրուեցան կանխարգելելու համար յարձակումներու կրկնութիւնը: Դաշնակից ուժերու հրամանատարութեան քաղաքային անձնակազմը Պարսի կեդրոնատեղիին մէջ պիտի մնայ յառաջիկայ 36 ժամերուն՝ ապահովական պատճաններու համար, յայտնեց բանբեր մը, որ սակայն մանրամասնութիւններ չփոխանցեց:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտ, որ ձափոն կ'այցելէ, հերքեց, որ դաշնակից ճակատը տագնապ մատուցած է Իրաքի մէջ: Ռամսֆելտ աւելցուց, որ Իրաք ուժ ուղարկող իրաքեան չի երկիր պէտք է գիտակցի, թէ պատերազմական իրավիճակ ապրող երկիր կ'ուղարկէ իր պինդախնամները եւ ըստ այնմ որոշում տայ: Ան ըսաւ նաեւ, որ դաշնակից ճակատը յառաջիկայ քիմիա արձակած իրաքի մէջ:

(ԱՅՓ)

ՔՈՐԷՅ - ԸԱՐՈՆ ՎԱՆԴԻՊՈՒՄԻ ՄԸ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԹԻՆ

Պաղեստինեան շրջաններուն եւ Իսրայէլի մէջ նախապատրաստական քայլեր կ'որդեգրուին երկու վարչապետներուն միջեւ հանդիպումին համար: Պաղեստինցի վարչապետ Ահմէտ Քորէյ յայտարարած էր, որ տեսակցութիւնը անիմաստ պիտի զուռնայ, եթէ չօշակելի արդիւնքներ պիտի չունենայ:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Շաւէր Արաֆատի խորհրդատու Նապիլ Ապու Ռուստայան իր կարգին երէկ ըսաւ, որ Քորէյ - Արիէլ Շարոն հանդիպումը պէտք է աւարտի համաձայնութեամբ մը հաւանականութեան վերջ տալու եւ պաղեստինեան շրջաններուն շրջափակումը ջնջելու: Ապու Ռուստայան աւելցուց, որ այս պիտի հանդիպումը պէտք է լաւապէս ծրագրուի ու պատրաստուի:

Քորէյ խոստացած է Իսրայէլի հետ զինադուլ մը դարձնել իր կառավարութեան առաջնահերթութիւն վայելող հարցերէն մէկը: Իսրայէլեան բանակի հրամանատար Մոշէ Եսալոն կոչ ուղղեց իր կառավարութեան առիթ տալու Քորէյի զինադուլի ծրագրին, զոր «ճիշդ ենթադրուած վրայ դրական քայլ մը» նկատեց:

Պաղեստինեան «Ուաֆա» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Քորէյ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը յայտնած է, որ կը մտադրէ հանդիպում մը ունենալ Շարոնի հետ: «Ուաֆա» աւելցուց, որ փոխանցումը եղած է հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին: Ըստ «Ուաֆա»ի, Փաուլը ըսած է, թէ Ուաշինկթըն ցաւ յայտնած է, որ պաղեստինեան ապահովութեան բոլոր գործակալութիւնները Քորէյի հակակշիռին ենթակայ չեն:

ՀԱՄԱՍ ԿԸ ՄԵՐԺԷ ԶԻՆԱՂՈՒԼԻ ԱՆԱԶԱՐԿԸ

Համաս իսլամական շարժումը մերժեց Իսրայէլի դէմ յարձակումները անմիջապէս դադարեցնելու ծրագիրը, բայց եւս այս պատրաստակամութիւն յայտնեց վարչապետին հետ քննարկելու առաջարկը: Համասի հիմնադիր ղեկավար շէյխ Ահմէտ Շաիբ ըսաւ, որ անցեալին Համաս զինադուլ յայտարարեց, սակայն անիկա ձախողեցաւ, որովհետեւ Իսրայէլ չ'ուզեց իտալացիները եւ չ'ուզեց, որ պաղեստինցի ժողովուրդը ապահով պարի:

Շաիբի դիտել տուած, որ Համաս պատրաստ է լսելու Քորէյը, աւելի ուշ որոշում տալու համար զինադուլին մասին:

(ԱՅՓ)

ԹՐԲԱԿԱՆ ԳՐԱԲԱՆ ԴԵՍ ՌԻՍԱԼՈՂԱԿԱՆ ՄԵԾ ՅՈՅՅ՝ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԵԶ

ՆԻԿՈՍԻԱ, 14 (ԱՅՓ).- Նիկոսիոյ մէջ Հարիւրաւոր յոյն կիրարացի ռուսանոյնքեր Ուրբաթ օր թրքական գրաւուումին դէմ ցոյց մը կատարած են, մինչ թուրք կիրարացիք կը պատրաստուէին այսօր իրենց «պետութեան» 20րդ տարեդարձը նշելու:

Ռուսանոյնքեր եւ աշակերտները կը բողոքէին հիւսիսային կիրարացի միակողմանի կերպով անկախութեան հռչակումին դէմ: Անոնք պահանջած են, որ վերամիացած կիրարացի անդամակցի Ե. Միութեան եւ թուրք զինուորները հեռանան կղզիէն:

Ըստ ոստիկանութեան, միջադէպեր չեն արձանագրուած եւ ցոյցը խաղաղօրէն վերջ գտած է:

«ԵՈՒԹՈՒ»Ն ՀԱՐՅՈՎ ՓՈԻԹԻՆ ԿԸ ՄԵՍԱՅ ԱՆՁԻՁՈՂ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փուտին երէկ Ռուսիոյ գործարար պատասխանատուներու հետ հանդիպում կատարեց «անցեալին պիտի չվերադարձուի», յատկապէս արտադրատեղիով «Եուրո» ընկերութեան վրայ ի գործ գրոծած ճնշումներուն պատճառով ծայր տուած տագնապին:



Ան նաեւ շեշտած է, որ կարեւոր դիրք վայելող գործարարներու կողմէ խորհրդարանին մէջ իրենց շահերուն պաշտպանութիւնը այլեւս պիտի չ'հանդուրժուի:

«Եուրո»-ի նախկին տնօրէն Միխայիլ Խոտորովը ռուս միակ միլիոնատէրն է, որ բացառապէս ֆինանսաւորած է ընդդիմադիր կուսակցութիւններ եւ մեկնաբաններու ենթադրութեամբ հարստութեան նման օգտագործում մը կրնայ պատճառած ըլլալ Կրեմլինի գայրոյթը:

Սակայն Փուտին հարիւրաւոր գործարարներու կտրուկ կերպով բացատրած է, որ «Եուրո»-ի հարցը եզակի է եւ թէ պետութիւնը անցնող տասնամեակին սեփական մարզին անցած ընկերութիւնները դարձեալ պետական մարզ պիտի չ'փոխանցէ:

(ԱՅՓ)

Հ. Յ. Դ. Ի ՀԻՄՆԱԴԻՐ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ...

Շարունակուած 3րդ էջէն

առաջ ինքզինքն գկատմամբ պահանջուող ըլլալու պարագան եւ իր անձը ուրիշներուն իբրեւ օրինակ ծառայեցնելու մնալու ճիգը:

Անդրադառնալով 80 տարիներու թաւալումին հետ միջազգային, ազգային եւ կազմակերպչական առումով արժեքներու եւ երեւոյթներու կրած փոփոխութեան, Կ. Յովհաննէսեան զիտել տուաւ, որ թէի հարց կը տրուի յաճախ, որ Սիմոն Չաւարեան ի՞նչ պիտի ընէր եթէ ներկա ըլլար, սակայն խորքին մէջ պատասխանը մէկ է ու հաստատ. ան ճշմարիտ վճռակամ եւ հատու պիտի ըլլար ժխտական երեւոյթներու գկատմամբ եւ առանց երկար մտածելու պիտի փորձէր Չաւարեանին իր մտրակով սանձել, չքացնել ժխտական երեւոյթները եւ անհրաժեշտութեամբ պարագային անխնայ պիտի բնացնէր ու հարուածը գանձէր:

«Ինչպէս որ քրիստոնէութիւնը կը սպասէ իր Քրիստոսին՝ փրկելու համար մարդկութիւնը իր բոլոր՝ բոլոր՝ մեղքերէն, նոյն ձեւով հայութիւնը կը սպասէ իր Չաւարեանին»:

«Ինչպէս որ քրիստոնէութիւնը մնայուն նորոգման ընթացքի մէջ պէտք է գտնուի՝ նոյն ձեւով հայութիւնը պէտք է գտնուի մնալուն յեղափոխականացման գործընթացի մէջ:

«Որովհետեւ ինչպէս որ ամեն քրիստոնէայ քրիստոնէայ չէ, նոյն ձեւով ամեն հայ հայ չէ: Եթէ զիտիք չէ քրիստոնէայ ըլլալ, մնացապէս զիտիք չէ հայ ըլլալը, յատկապէս դժուարին պայմաններուն մէջ», հաստատեց բանախօսը:

Կ. Յովհաննէսեան նշեց, թէ այսօր հայ դպրոցը կը սպասուի հայութիւնը: 80 տարի առաջ նոյն երեւոյթը տագնապեցուցած էր Չաւարեանը, որ հաստատած էր, թէ իրենց զաւակները հայեցի դաստիարակութեան հետու կը պահեն այն ղեկավարները, որոնք իրենք իսկ հայկականութիւնը կը բարոյեցնէ:

Ս. Չաւարեան չէր սիրէր արտաքին երեւոյթները եւ հռետորութիւնը, այլ կը հաւատար, թէ պարզապէս ժողովուրդին պէտք է հասնի համեստ ձեւով, անոնց մատչելի եւ ձեռնարկ պարունակի մէջ:

Իր խօսքը եզրափակելով բանախօսը ըսաւ. «Մէկ ու միակ ցանկութիւն պէտք է ունենալ կենսի մէջ. Չաւարեանի աթոռն է անիկա: Խիղճի եւ բարոյականութեան աթոռը: Խօսքի եւ գործի հաւասարակշռութեան աթոռը: Ամուր գկարագրի եւ անձի օրինակի աթոռը: Գաղափարի եւ մտրակի աթոռը: Երանի անոր, որ կը գրաւ Չաւարեանի աթոռը»:

Բանախօսութեան ետք Միայլ Ղարիպեան ասմունքեց Սիմոն Չաւարեանի նուիրում Սիմանթոյի «Չաւարեանի Հոգին»:

Չեռնարկը փակուեցաւ «Մշակ Բանուոր» քայլերով: